

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ՍՐՏԱՍՍԱՆՍՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Ի Կ

Ծանոցման տողը
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՅԻ

Redaction u journal

Iravounk

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иравунк


ВАРНА

Գրութիւնք եւ տպոյթիւր

ԹԻՒՐՔԻՍ

ԵՒ

ԱՆԳԼՈ-ՌՈՒՍ ՄԵՐՁԵՑՈՒՄ



Այս միջոցիս թուրքաց պաշտօնական շրջանակներու մէջ՝ մեծ յուզում, երկիւղ և մտահոգութիւն պատճառած է Անգլո-Ռուսական մերձեցումը:

Թուրքիա՝ իրեն ամենամեծ թշնամին նկատած էր միշտ Ռուսիան, և այնպէս համոզուած էր, որ Ռուսիոյ գլխաւոր բաղձանաց ու նպատակաց մին էր մի օր Արեւելքի մայրաքաղաքն Եդրիկ: Պոլսոյ տիրելու Ռուսո-ճաբոնական պատերազմը, և Ռուսիոյ ներքին խռովութիւնները, որոց հետեւեցաւ Մայրաքաղաքի Արեւելքի մէջ կրած մեծ պարտութիւնը, վայրկեան մը թուրքերուն սիրտ տըւաւ, և ասոնք սկսան այն համոզումը գոյացնել թէ՛ այլևս Ռուսիայէն վախու տեղ չէր մնացած, և թէ թուրքիա գէթ ժամանակ մը պիտի կարենայ իր թշնամիէն աներկիւղ ազատ չունչ քաշել:

Ահա այս յուսով հազիւ թուրքերը սկսեցին էին մեծ մեծ երազներ տեսնել, երբ անկիւնուս մերձեցման ձայնը միայն բաւական եղաւ այս վերջին մի քանի շաբթուան մէջ Սուլթանին հանդիմանութիւնը ու իր երազած բլանները ամբողջապէս և առաջուանէ առաւել վրդովել:

Եւ իրօք ինչպէս կարելի էր այս լուրը չվրդովեցնէր թուրքիան երբ սա կը տեսնէր որ իր դարաւոր թշնամին Ռուսիան, կը մօտենար յանկարծ Անգլիոյ, որոյ վրայէն իր վստահութիւնը բարձած էր արդէն:

Երբ թուրքիա մեծ ճգնաժամի տնցուց, Անգլիա ամեն տեսակ օգնութիւններ ըրաւ թուրքիոյ թէ դարմով, թէ զէնքով և թէ ուրիշ միջոցներով: Այն ատենները թուրքիա մեծ վստահութիւն կը տածէր Անգլիոյ վր-


րա, բայց երբ Անգլիա եգիպտոսն ու հիպոսը դրանց, թուրքիա այլևս վստահութիւն չունեցաւ անոր և ան ալ իրեն երկրորդ մի թշնամին նկատեց, մանաւանդ երբ Անգլիոյ նախանձութիւն ելաւ թէ՛ Արաբիոյ ապստամբութիւնները և յարաճիւն վրդովութիւնները Անգլիոյ դուրսէն:

Իսկ Անգլիոյ գալով՝ ասի հիմայ համոզված է որ թուրքիա այլևս չպիտի վստահի իրեն, ուստի որոշած է ինչպէս կը գրեն Անգլիական թերթերը, այսուհետեւ թուրքիոյ գործերէն ձեռքը քաշել՝ որչափ որ Եւրոպական ներդաշնակութեան մէջ իր խաղցած մեծ գերբը ներելու ըլլան:

Անգլո-Ռուսական մերձեցումը որչափ որ ի գործ դրուի ծայրագոյն՝ Արեւելքի խնդրոց մէջ՝ թուրքիոյ համար այնչափ մեծ մտատանջութիւն չը պիտի պատճառէ, բայց անգամ մը որ այնտեղի գործերը կարգադրութիւն գտնեն և կարգը վայ Եւրոպական Արեւելքի եզերաց վրայ կարգադրութիւններ ընելու, ահա այն ատեն թուրքիա պիտի զգայ իր ամենամեծ վիշտն ու ցաւը, Անգլո-Ռուսական մերձեցումէն և ինչպէս կըսէ «Թան», թուրքիա գիտէ որ Եւրոպական Արեւելքի եզերաց վրայ ըլլալիք կարգադրութիւն մը իրեն համար չահաւոր չպիտի ըլլայ:

ՈՂՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆԻՈՅ ԹԱԳԱՌՈՐԻՆ ԻԷՄ



Այս սոսկալի եւ արեւմտահեղ ոճրագործութեան մասին ի նորոյ մեղ հասած լրացուցիչ տեղեկութիւնները եւս կը հաղորդենք այսօր մեր Քրեաւունքի ընթերցողաց:

Այս ոճրագործութեան բուն հեղինակին անունը Մաթէօ Մօրալէս է, և ոչ Մօնթանօ: Այս անարշիւթնախ՝ Ալքալա փողոցին մէջ ի պէրիսի պանդոկը գտնուող սենեակ մի վարձար է: Բայց յետոյ այս սենեակէն հարստե-

կան թափորը չպիտի երեւայ ըսելով՝ զոցեր է մեր նախապէս յիշած սենեակը վարձար է Մայր փողոցին 88 թիւ տան մէջ՝ երրորդ հարկը:

Ռուսներ միայն փողոցի մէջ չէ ըրած իր սարսափելի կոտորածները, այլ եւ անարշիւթի վարձած տան մէջ ալ, ուր ուրիշ հոգի մեռած են եւ շատեր վերաբորուած: Զարմանալի է թէ ինչ ուժգին է եղած այն արձակված միակ ուսմը, որ կրցած է թէ տանը մէջ եւ թէ փողոցի մէջ այնչափ զոհեր ընել:

Տանը ստորին յարկը՝ Թօլօգայի Մարքիզին եւ Ատանիօ կոմսուհու յետեւ երեք տարու թոռուհին անմիջապէս մեռն են: Առաջին յարկին մէջ եւ անոր պատշգամբին վրայ կարծես ճշմարիտ ջարդ մը եղած է, որովհետեւ 3-4 հոգի մեռած ինկած են գետնին վրայ: Թօլօգայ Մարքիզուհու Վարդէն հին մէկ բաղնիք կարած ինկած է: Երեք մարդ եւս սրահին մէկուն մէջ սպանուած բռնուած են:

Փողոցի տեսարանը նոյնպէս սոսկալի է: Արքայական կառքին լծուած ութ ձիերէն մէկուն վրայ նստած փոքրահասակ տղու մը զլուխը վիզէն խուլելով ինկել եւ փոքր բացուել է: Հարկաւոր մը եւ երկու տեղակալներ եւ երեք զինուորներ սպանուել են: զետնին վրայ բռնուած տղու մը ուղեղը աստ անդ ցրուել է: շատ մը զօրքեր վերաւորեալ են ծանրապէս, մի խօսքով՝ արքայական կառքին հետեւող զօրախումբը զրեթէ ընտելի եղել է: Կառքը քաշող ձիերէն միոյն փորձաքորը գուրս է ինկել, ուրիշ երկու ձիեր ալ ծանր վէրք ստացել են:

Նոր տեղեկութեանց համեմատ արքայական կառքը մեծ վնաս չէ կրած, միայն թէ կառքին ապակիները փշրուել են: Թաղաւորին եւ Թագուհին անվնաս ազատութիւնը կը վերադրուի այն միջադէպին թէ Արքայական կառքին առջեւէն գացող Մայր Թագուհին կառքը կանգ կառնէ 88 թիւ տանը առջեւէն հազիւ անցած եւ ասոր համար Արքայական կառքն ալ կստիպուի նոյն տան առաջը չհասած կենալ ճիշտ այն միջոցին, որ անարշիւթ ոճրագործը կը նետէ իր կեցած պատշգամբէն ուսմը ու կանայաւանայ:

Կրտսէի թէ Մօրալէս հարուստ անարշիւթներէն էր: Սենեակին մէջ գրտնուել է 500 Ֆրանք եւ շատ մը Լօնտրա շինուած թանկագին հանդերձներ:

Ստիկականութիւնը շատ մը մարդիկ անարշիւթ թէ ոչ ձերբակալել է:

Վերջին պահուն իմացուեցաւ որ, բուն անարշիւթ անարշիւթ Մօրալէսը, Մարտիտի մօտ Թօլօգայի սրահի մօտ գիւղը փախչելով, հոր ու գիւղի ի-

մանալ կառախուսին ժամը քանիին Պարչէլօնա երկաթուղի: Յետոյ գիւղին դաշտերուն մէջ, ժամանակ անցունելով համար պտտած ատենը, դաշտապահի մը պատահել է, եւ ասի իր այրած ձեռքերը տեսնելով կասկածել է եւ բռնել ուղեր է: Ասոր վրայ Մօրալէս դաշտապահը սպաննել է, եւ յետոյ անձնասպան եղել է Ռէվօլվէրի հարուած մը քաշելով իր գլխին:

Դաշտապահին այրին պիտի ստանայ 25,000 քեսեթա պարգեւը զոր կառավարութիւնը խոստացել էր տալ փախստական Մօրալէսը բռնողին:

ՏՕՔԹ ԼԵՓՍԻՈՒՍԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Տօք. Լէփսիուս Գահրէ Ամբրիկեան վարժարանի մէջ Ապրիլ 13 ին արտադրած է հետեւեալ բանախօսութիւնը զոր կարտատպենք Վուսաբերդէն քաղելով:

Տիրուհիք եւ Տեառք,

Ուրախ եմ հոս հաւաքուած տեսնելով այնչափ հայ բարեկամներ: Ես անիթ ունեցած եմ ճամբորդելու ձեռքիկ այնպիսին մէջ, ակնաստես եղած եմ ձեր տխուր վիճակին եւ մօտէն զգացած եմ ձեր կրած ցաւերը: Ուրախ եմ սակայն, որ եթէ ձեր ազգին մեծ մասը զօրաղղ դրութեան մէջ կ'ապրի, գոնէ զուք հոս կը վայելէք խաղաղ եւ ազատ կեանք մը: Ես ձեր ազգէն ճանչցած եմ շատ մը անձնաւորութիւններ զորս կը յարգեմ. ունիմ ձեր ազգէն գործակիցներ, բարեպաշտ, պարկեշտ ու նկարագրի տէր անձինք, տեսակցած եմ ձեր հոգեւոր առաջնորդներէն ոմանց հետ ալ, տեսած եմ նաեւ իգմբիւնան Պատրիարքը 1896 ին, եւ ձեր կաթողիկոսը, այն մեծ անձնաւորութիւնը յիշմիածին: Նաեւ շատ մը եպիսկոպոսներ եւ երէցներ. եւ թէ՛ Լուսաւորչականաց եւ թէ՛ Բողոքականաց մէջ գիտուն հոգեւորականներ, սրտնցմէ բարեկամներ ալ ունիմ:

Ես տասը տարի է որ կըրաղիմ Հայկական ինքրով: 20 տարի առաջ զբնացած եմ Երուսաղէմ, եւ հետաքրքրուած եմ Ասիական կեանքով եւ դրութեամբ:

Երբ, 1896 ի զէպրեբուն վրայ առաջին անգամ կարգադրի Գերմանական թերթերու մէջ՝ Իրողութիւնը ինձի համար մուր կը թուէր: Այդ թիւիկըր այնպէս մի կը ցոյցնէին թէ հայկական յեղափոխութիւն մը ծագած


է զոր թիւը կառավարութիւնը կու-
զէ հանդարտեցնել. չկրցայ իբրեւ-
մարտութիւն ընդունիլ այդ տեղե-
կութիւնները, որովհետեւ անոնց ազ-
բերները թրքական էին, ուստի
վճռեցի անձամբ երթալ թիւրքիս եւ
խնդիրը ստուգել տեղւոյն վրայ, երբ
կ. Պօլիս հասայ. զարմանքով տեսայ
որ թիւրք կառավարութիւնը կար-
գիւնէ զիս Հայաստանի կողմը ուղեւո-
րելէ : Ուստի ստիպուեցայ ճամբոր-
դելու Կեսարիոյ եւ Կիլիկիոյ գծով
հարաւային ուղղութեամբ : Ծամբուս
վրայ բաւական բաներ լսեցի, հա-
մագեւելու համար թէ իրողութիւնը
հակառակն էր գերման թերթերու
գրածին : Իրաւ կային քանի մը յե-
ղափոխական քօմիթէներ, սակայն Լա-
նոնք քիչ գործ ունէին ազգին մէջ,
մինչդեռ ժողովուրդին մեծ զանգու-
ծը, այսինքն գերդասերները, գաղա-
փար չունէին յեղափոխական շար-
ժումին վրայ : Ես ինձի այնպէս վը-
ճռեցի որ շատ տեղեր փորձանքը հա-
սած էր յեղափոխական գործէ լուր
չունեցողներուն վրայ : Մտածեցի թէ
ի՞նչպէս կըլլայ որ խաղաղօրէն ապ-
րող ժողովուրդը, այսպէս կենթարկո-
ւի յանկարծական ազդեցի : Իմ եզ-
րակացութիւնս այս եղաւ որ անհրե-
ւոյթ ձեռք մը կայ այս բաները
զորոյ : Ես ջանացի այն ատեն գրել
ճշմարտութիւնը, իմ քննութիւննե-
րուս համեմատ, որոնք առնուազն
150,000 հայու ջարդուած էլլալը կը
հաստատէին զօրութիւն փաստերով : Իմ
յայտնութիւններս հերքող չը գտնուե-
ցաւ Եւրոպայի մէջ :

Երբ Փոքր Ասիայէն Գերմանիա դար-
ձայ՝ հոն կազմուած էին երկու Հա-
յաստան ընկերութիւններ, մին Պիւր-
լին, միւսը՝ Ֆրանգֆորտ : Անոնց հետ
խորհրդակցեցանք թէ ի՞նչպէս օգնենք
հայերուն : Ուստի ըսին որ այդ խը-
նդութեանց միջոցին կարելի չէ Գեր-
մանիայէն մարդ զրկել մինչեւ հոն,
ուստի, լաւագոյն է որքերը բերել Եւ-
րոպայի հարկէ դուրս էր այն ա-
տենները երկրին մէջ գործել. հոն գա-
ցողները խտան չէին սպահովու-
թեան վրայ : Ո՞վ կրնայ ըսել որ հա-
յերը սպաննողները անոնց որքերն
ալ չպիտի սպաննեն : Ես ատոնց պա-
տասխանելով յորդորեցի որ ամեն
վտանգ յանձն առնելով երկրին մէջ
գործենք. եթէ որքերը Գերմանիա բե-
րենք, ըսի. անոնք կը կորսնցնեն ի-

րենց ազգութիւնը : Եթէ այդ ազգը
կը սիրենք՝ անոնց պակասած ան-
հատներուն տեղը լեցնել աշխատե-
լու ենք : Արդէն զգալով թիւն մը
է որ իրենք կը հեռանան իրենց երկ-
րէն, ապօրին անդին կը փախչին.
ցրուած ազգի մը համար դժուար է
պահել իր ազգութիւնն ու լեզուն
ուստի պէտք է երթանք իրենց եր-
կիրը, եւ հոն օգնենք իրենց :

Մեր ըրած օգնութիւնը բաւական
չէ այդ զգալով թիւնը արգիւելու,
սակայն զարձեւալ ուրախ եմ ըսելու
որ Գերմանացի բարեկամներու շնոր-
հիւ տասը տարուան մէջ 2 հազար որ-
քեր լաւ խնամք առին :

Այս տասը տարուան միջոցին Գեր-
մանիոյ քրիստոնեաները հինգ միլիոն
մարդ ներգրեցին Հայոց համար :
Բայց ես այս գրածին յառաջ բերած
օգնութիւնը շատ աւելի մեծ կը գրե-
նեմ քան ներթափան օգնութիւնը :
Այս նպատակը քաջալերելի բան մը
էր Հայ ժողովուրդին համար : — հեռա-
ւոր երկիրներէ ձայն մը որ կըսէր
Հայուն. «Ելիր, կանգնէ, ոյսերդ ըս-
տիք : Աստուած ալ քեզի պիտի օգ-
նէ » : Այս օգնութեան գործին մէջ ու-
րիշ բարիք մ'ալ կը տեսնամ ազգին
համար : Ասկէ առաջ մեծ խրամ կար
Լուսաւորչական եւ ուրիշ եկեղե-
ցիներու մէջ. բայց զգալով թիւնը
երեւմտ իրարու կը մօտեցնէ զիրար չը
հասկցող եղբայրները : Մեր որքերուն
մեծ թիւը Լուսաւորչական եւ Մենք
երկէք նպատակ չունեցանք օտարա-
ցնելու զանոնք, այլ ուղեցինք որ ա-
նոնք իրենց եկեղեցւոյն ծոցը : Լու-
սաւորչական հոգեւորականութիւնը
ըմբռնեց այս բանը, տեսաւ մեր ան-
խաղաղութիւնը, եւ մեզի օգնեց
մեր գործը շարունակելու :

Հիմա Ուրբանի մէջ ունինք քանի
մը հարիւր որքերայրներէ կ'աւ 300
որքեր, տարբեր դասանալներէ, որոնց
ամենքը մէկ կրթութիւն կ'աւ
ունեն. ատոնք կը զրկենք իրենց ազ-
գային դպրոցը, զի մեր նպատակն է
ճանչցնել իրենց ազգը եւ պատմու-
թիւնը, որպէսզի ապագայ պատմութեան
նատուութիւնը իրենց վրայ առնեն :


ԴԱՅՆԱԿՑԱԿԱՆ ՆՈՐ ՀԵՐՈՍՈՒԹԻՒՆ ՄԸ



Երկու օր սրանից առաջ այստեղ
տեղի ունեցաւ մի մարգասպանութիւն,
որը իր վայրագութեամբ յուզեց եւ
զայրոյթով համակեց ամբողջ ազգա-
բնակչութիւնը : Զոհը մի հնչակեան էր
Մհեր անունով, որը սրանից մի
քանի ժամանակ առաջ ծնած լինե-
լով Պետրոս անունով մի դաշնակ-
ցակտնի, ենթարկել էր քանտարկու-
թեան պատժին, հնչակեան կազմա-
կերպութեան կողմից, բայց այդ վճռից
դժգոհ՝ դաշնակ. տեղական կոմիտէն
վճռել էր տեղորի ենթարկել յիշեալ
Մհերին. եւ տեղորը կատարեց օրը
ցերեկով, ամենախայտառակ ձեւով :
Թշուառ զոհը ընկաւ 33 գնդակի եւ
դաշոյնի հարւածներէ, իսկ խուլիզան
օճրագործ տեղորիստները ամենայն
բարբարոսութեամբ, դիակը անպատ-
ւելուց յետոյ, կողոպտեցին նրան.
տանելով ժամացոյցը, ատրճանակը, 3
թուաման փող, նոյնիսկ գլխարկն ու
դաշոյնը :
Ոստիկանները գալով սպանութեան
վայրը, հանդիսատես եղան խոնւած
ժողովրդի լոցին, ճիշն, զայրոյթին ու
զգուշաբնի եւ իմանալով քահէ ու-
թիւնը, հեռացան, առանց հետապնե-
ղելու եղեռնի հեղինակներին :
Աւերած օրը տեղի ունեցաւ զոհի
հանդիսաւոր թաղումը խուռն բազմ
մութեան ներկայութեամբ : Հնչակ-
եանները կողմից, 7 պսակ էր դրած
դագաղի վրայ եւ պ. Ա. ի դամբա-
նականը յուզեց ու լացարկեց ամբողջ
հասարակութեանը :
Ժողովուրդի ցասումը խիստ բուռն
է զէպի ոճի հեղինակները, մասնա-
ւորապէս հայ «ազգասէր» կուսակցու-
թիւններն, ինչհանրապէս, որոնք ի-
րանց այստեսմամբ անբարոյականա-
ցնում են մեր միջավայրը : Այժմ
թաւրիշում որոշել են քոյկօտի ենթա-
կել այդ կուսակցութիւններին, եւ չը
յաճախել նրանց ներկայացուցիչներն,
դասախօսութիւններին եւն :
Թշուառ հայ ժողովուրդ, մինչեւ
երբ ստրկօրէն պիտի տանիս, այդ
«սգային» կողմած կուսակցութիւն
ները կամայականութիւններ լուծը,


մինչեւ երբ ականաւան պիտի լինես
այդ կուսակցական ոճիներին ու
արեւուն. եւ մինչեւ երբ պիտի թոյլ
տաս յանուն «թոյնահերին» շահագոր-
ծել քեզ
(Կայծ)

ՎԵՆԱՓԱՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ

Ահաւասիկ այն կոնդակը զոր
անցեալ թուով յիշեցինք :
Նշանակութեան արժանի է ող
կաթողիկոսը այս անգամ աշխար-
հաբար գրած է ե ոչ գրաբար
ինչպէս որ մինչեւ այսօր ընել
սովորութիւն էր :
ՄԿՐՏԻՉ ծառայ Յիսուսի Գրիստո-
սի եւ անհասանելի կամօքն Աստու-
ծոյ եպիսկոպոսապետ եւ կաթողիկոս
Ամենայն Հայոց, Մայրագոյն պատրի-
արք համագլխային նախամեծար Աթո-
ռոյ Արարատեան առաքելական Մայր
Եկեղեցւոյ կաթողիկէ էջմիածնի :
Ռուսիայի սահմաններում ապրող
Մեր սիրելի եւ հարազատ զաւակ-
ներին Հայաստանեաց սուրբ Լու-
սաւորչին ներթափան Աթոռից հայրա-
պետական օրհնութեամբ յայտնում
ենք :
Հայրապետական գոհ բարձրանա-
լու առաջին իսկ օրերից՝ Մենք
փափաքում էինք վերականգնել Հա-
յաստանեայց եկեղեցու դարբեր ըն-
թացքում սրբութեամբ պահպանուած
իրաւունքը նրա պաշտօնեաների վե-
րաբերմամբ, սակայն ժամանակի ձա-
խորդ հանգամանքները արգելք հան-
դիսացան Մեր այդ մտադրութեան
իրականացմանը եւ Մեր իղձը ամբողջ
13 տարի միաց անկատար : Այժմ,
որպէս Հայրապետ Հայաստանեայց Ա-
ռաքելական Եկեղեցու եւ ամենա-
մեծ պատասխանատու նրա ցանկալի
բարգաւաճման եւ ծաղկեալ վիճակի
թէ Մեզ ընտրող հայ ազգի եւ թէ՛
Աստուծոյ առաջ, հասած ենք համա-
րում ժամանակը եւ հասուն Մեր ժո-
ղովրդը, ուստի, Մեր այս Հայ-
րապետական հոգեւակով վերականգնե-
լով Հայաստանեայց Առաքելական Ե-
կեղեցու դարբերով սրբագործուած
իրաւունքը՝ Քեզ ենք տալիս, ժողո-
վուրդ Հայոց, թեմակալ առաջնորդ-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ԿԱՐԻՊ ԱՆՊԵՐ . . .

(Շար. նախորդ թիւէն)

Մո'ւթ, սարսափ ու խաւարամ'ծ
գիշեր մըն էր : Պահանջներուն հաստ
ճովանը ժամը հինգ կը զարնէր : Եր-
կինքը ծածկուած էր մառախուղի բարդ
ամպերով ու քստմեցուցիչ ցուրտ մը
կար :
Այդ պահուն վանայ Արարք կոչուած
արուարձանին մէկ անշուք թաղին մէջ
մարդ մը կը թափառէր :
Այս մարդը վերէն ի վար ծածկուած
էր երկայն ու հնամաշ հապայով մը .
եւ գլուխը թխագոյն քօլօզ մը գրած
էր :
Թաղին մէկ անկիւնը, կոտորածի սեւ
օրերու աւերակաց մօտ, քարձր ու եր-
կու յարկով ապարանք մը կար, ուր քա-

րուկիւր ու հոյակապ շինուածք մ'ու-
նէր : Այս ապարանքը Շիրվանեանց Գար-
բէլ Աղային էր :
Հապայի մը տակ ծածկուած մարդը
մօտեցաւ այդ հոյակապ ապարանքին
ու անոր երկաթապատ վանդակով մը
յրջապատուած պարտէզին մէկ անկիւ-
նէն մագլցելով ներս նետուեցաւ : Խիտ
խիտ ծածկուած մէջէն ու առանց չշուկ
մը հանելու ապարանքի վարի յարկը
գիւմեց ու անոր լայն ու ծանրագին
վարագոյրներով ու երկաթէ վանդա-
կով ծածկուած պատուհանին առջեւ
կանգ առաւ : Պատուհաններէն մին
բաց էր : Նայեցա՛ւ ներքը
Հո'ն, այդ չքեղ դահլիճին մէջ ջահ
մը կը վառէր, բայց մէկը չը կար :
Թողոց այդ դահլիճն ու յառաջացաւ
ապարանքին յետնակողմը : Տեսաւ որ
մէկ երկու ոտք խոր ու նեղկեկ նը-
կուղ մը շինուած էր այդ յարկին տակ
ու պզտիկ դուռ մը ունէր : Մութին
ու մառախուղին մէջ հազիւ նշմարելի
եղաւ այդ դուռնի քովն իջաւ եւ զայն
անգամ ը հրեց : Օ՛հ, դուռը քսուե-
ցաւ :


Ան ատեն յառաջացաւ հապային տա-
կէն փոքրիկ լաբար մը հանելով վա-
ռեց : Հասկցաւ թէ ներքնայարկ մըն
էր ապարանքին ուր ածուխ եւ այլա-
զան վառելիքներ ամբարուած էին :
Մէկ անկիւնն ալ դիզուած կը մնային
քարիւղի անտուկները :
Պահ մը կեցաւ . . . զողաց . . . ալ-
լայեցա՛ւ ու ձեռքի գերագոյն շարժում
մը ընելով, քաջագանցեց :
— Զէ՛ . . . տունն աւերողին տունն
Աստուած թո՛ղ քանդէ :
Ու քարիւղի անտուկներէն հեռանա-
լով քիչ մըն ալ յառաջացաւ եւ տե-
սաւ քարէ սանդուխ մը : Անեղիւզ
քայլերով վեր ելաւ ու սրահի մը վրայ
գտաւ ինքզինքը : Բայց այդ սրահը
մութ էր : Աչքը չորս դին յառեց ու
ու ականջ դրաւ : Զայն ցիւն մը չկար :
Ուստի բացաւ սրահին դուռն. ուսկից
աղօտ լոյս մը կը թափանցեր կեցած
տեղը : Աւելի լայն, ընդարձակ ու կա-
հաւորուած սրահ մըն էր տեսածը : Ա-
նոր ձեղունքն լամպար մը կախուած էր
որուն շուրջը պատած ապակին կար-
միր գոյն մը ունենալուն, լոյսն ալ

կարմիր կը ցլուր չորս կողմը : Կար-
ծես թէ արեւի երանգ մը կը պլպլար
հոն :
Անձանթ մարդը խորին զգուշու-
թեամբ մը կը գիտէր ու ամեն շշուկի,
ամեն պզտիկ միջոցի ու ամեն անորոշ
շշուռի ականջ կուտար : Յետոյ սրա-
հին վրայ երեւցած մէկ դուռը հրեց ու
ներս մտաւ :
Քառակուսի, հրաշագեղ ու ակնախ-
տեղ տեսարան մը ունէր ներքը : Հո'ն,
կանանչ չուխայով մը ծածկուած մը
սեղանի մը վրայ ծերունի մարդ
մը ծուած էր ու անշարժ կը թո-
ւէր : Անոր մօտեցաւ ու երկիւղալի
նայուածքով մը գէմքը դիտեց : Հաս-
կացաւ ան կը քնանար : Կամաց մը
հապային տակէն դաշոյն մը հանեց ու
մրմնջեց :
— Աստուա՛ծ . . . անա՛ արդար ոճիւր
մը :
Ու մեքենաբա՛ր, կատաղի՛ ու բո-
լոր ուժով՝ բռնեց անոր կոկո՛րդը՝ եւ
դաշոյնը միսնց արտի՛ն մէջ :
Քրասեղանին վրայէ՛ն ու արիւնա-
խեղձ վիճակի մը մէջ քնացած ծերու-

ներին, յաջորդներին, գործակալներին եւ հոգեւոր վարչական հաստատութեանց պաշտօնեաներին ընտրութեան իրաւունքը, որից յետոյ ընտրեալները կը հրաւիրուին իրենց պաշտօնին պետութեան կողմից սահմանուած օրինական ճանապարհով, ի նկատի առնելով հայ ազգաբնակչութեան վերաբերեալ փոփոխութեան ճշգրիտ տեղեկութեանց թերութիւնը, առայժմ մինչեւ նրանց վերստնագումար եւ հայ ժողովրդից ընտրեալ պատգամաւորներին ժողովով հաստատուն կանոնադրութեան մշակումը, կարգադրուած ենք ընտրութիւնները կատարել կամուրջիկոսական ընտրութեան եղանակով ընդհանուր եւ անմիջական ձայնաւելութեամբ:

(Իսկականի վրայ Նորին Վեհափառութեան սեփական ձեռքով ստորագրուած է)

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Ամենայն Հայոց
10 Մայիսի 1906 թ.
Հատ Տոմարիս ՌՅՄԻ:

Մեր Հայրապետական ԺԳՐԻԳ տարին Արարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Վաղարշապատ
Թ. 549

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Հայերի վեհաժողովը փոխարինելու համար վերջապէս տեղիս իշխանութիւնը ձեռք առաւ միջոցներ: Սկսել են Մուղալու եւ Լիջվադին գիւղերից, իւրաքանչիւր տան վրայ նշանակուած ու վճարուած է 15-ական ռուբլի: «Սաքարի տունը Աստուած քանդի» ասուած են նրանք ու վճարում վրանասները: Նրանց մէջ նկատուած է ներքին խռովութիւն, մէկ մէկու մեղադրում են ու հայհոյում սպառնալիքներով:

Անցեալները Ղազարի գաւառից եկել էին մեր գիւղը մի քանիսն էլ մօտ 40 հոգի, որոնք պահանջում էին զօղոթմանցի երկու սպանված հայերի հիւանդները եւ չարագործների պատիժը: Լուրեր են գալիս, որ այդ զէպքի առթիւ Ղազարի հայ ազգաբնակչութիւնը խիստ գրգռված է:

Նին գետինը տապալեցաւ... 2ը կըրցաւ ճիշդ մ'անգամ հանել բերնէն... միայն թէ օձի մը պէս գալարուեցաւ, պրկուեցաւ ու ըրձուկնով մը խղզուած մնաց՝ ահաւոր ու եպրեւիլ՝ գարշութեան մը մէջ:

Ոճրագործը դուրս քաշեց գզրոցներէն մին ու փղոսկրով մը քանդակուած տուփ մ'առաւ անկից: Ետոյ դաշոյնովը կտրեց ծերունիին աջ ձեռքին միջաման, ու կամաց մը դուրս ելաւ սենեկէն: Առանց կասկածի ու վտանգի՝ յաջողեցաւ եկած ձամբէն փողոցը նետուել ու աւերակներու մէջ ապաստանելով՝ ինքնիքն մրմնջել:

—Այսպէ՛ս, Շիրվանեցի Գարբէ՛լ, այսպէ՛ս պիտի քաշկռտուէր դուն այն տարաբաղդ Ռէս Մուրատի որդւոյն ոտքին տակ, որուն ճրագը մարեցիր: Ահա՛ այս մատը, որ մեր գերդաստանի թշուառութիւնը սարքած էր ու հօրս արեան մէջ թաթխուած էր... այս անարգ մտի ու ոսկորի կտորն, որուն վրայ մեր տոհմին նշանաբանը կը տեսնեմ, որ թանգակին ու նուիրական ժառանգ մըն է... մէկ թզաքով՝ այս

Գաւառագետը նորից խոստացել է զիակները գտնել: Թուրքերից առած 3000 ռուբլուց միայն 1000 ռուբլի են առաջարկում սպանուածի եղբորը ստանալու: Վերջինս մերժեց. 2000 ռուբլին ու՛ր է գնալու, ո՞վ է տուժողը եւ ո՞վ է մէջտեղում օգտուողը: մի՞թէ բացատրել է հարկաւոր...:

Մօտ օրերս Գերան կայարանից չըրջակայ գիւղերն է ուղարկուած պատժողական զօրախումբ ընակիչներին զինաթափ անելու եւ աւազակներին ձերբակալելու նպատակաւ: Առայժմս ձերբակալուած են մօտ 60 մարդ: Խլել են 130 բն դան հրացաններ, 300 ատրճառակներ, 80 պիստոլետներ, 72 չախմախաւոր եւ մօտ 400 որսորդական հրացաններ: Խլած բոլոր զէնքերը հին ձեւի են: Պատժողական զօրախումբը, թնդանօթաձիգ զօրքի հետ միասին չըլում է գիւղերը: Վախեցած ժողովուրդը տալիս է նաեւ պապերից իբրեւ յիշատակ մնացած հին զէնքեր:

Շուշի, 16 մայիսի
Եւլախից Շուշի ճանապարհը դարձեալ փակվեց: Աղղամից հաղորդում են, որ հայ ճանապարհորդներին գերել են: Մանրամասնութիւններ անյայտ են:

Եւլախ, 16 մայիսի
Շուշու ճանապարհը անապահով է: Ե. Գանջեցեանին կողպտեցին եւ նա ստիպված եղաւ վերադառնալ Եւլախ, թիֆլիս գնալու նպատակաւ:

Վերջին պահուն մեզ հաղորդում են, որ Խէճորէնկում դաշնակցականների ձեռքով սպանւել եւ վերաւորւել են վերջին օրերս երկու հնչակեաններ:

Թիֆլիսի հայոց կոնսիստորիայի ծառայողները գործադուլ են յայտարարել. պահանջելով ռոճիկներ լաւելացումն:

Թիֆլիզի (ՆՈՐ-ԴԱՐ) իրեն տըպարանի գործաւորաց գործադուլ ընելուն համար, իր հրատարակութիւնը դադարեցուցած է առժամապէս:

հրեշային ու մարմնազէն զանգուածն, որ արեւնոտ է դե՛ս, պիտի պահեմ իբրեւ յիշատակ. որպէսզի գաւազիս ու թոռներուս ցոյց տամ...: Ախ, չը կրցայ... չը կրցայ՝ քարեղի սնտուկները վառել... ձեռքս չը գնաց... որովհետեւ այդ ապարանքին մէջ գուցէ անմեղ հոգի մը կը գտնուէր:

Այս սենախոսութիւնէն ետքը յառաջացաւ Ակոբի փառերը: Հապան փոսի մէջ նետեց ու վարազայ վանքին ճամբան ուղղուեցաւ:

Մառախուղը փարատած էր ու աստղերը սկսած էին փայլիլ երկնամարին վրայ: Միայն թէ՛ երբեմն երբեմն հորիզոններու ետեւէն հրազէն բոց մը կը ժայթքէր դուրս:

Ոճրագործը, որ մեր ծանօթ կարիպ Ախպէրն էր. վանքին պարսպէն քիչ մը հեռու, ցածուկ ու հողին գրեթէ հաւասար շինուածքով մը խրճիթին դուռը կանգ առաւ ու կամաց մը ձայնեց.

—Աւագ Ախպէ՛ր, Աւագ Ախպէ՛ր...
—Ո՞վ է ան... հարցուց մէկը ներսէն: Ես եմ, բաց դուռը ըստ կա իպ: Դուռը կամաց մը բացուեցաւ ու սենյակի վրայ երեւցաւ ալեւոր նստակով,

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհափառ կաթողիկոսի որոշմամբ Մատթէոս վարդապետ Մատթէոսեանցը էջմիածնայ Սինոդի անդամակցութենէ արձակուելով՝ Թաւրիզի Առաջնորդ կարգուած է:

—Սանֆրանչիսկոյի մէջ 100 իշափ Հայեր կը գտնուէին 14 ընտանիքով երկրաշարժի առեւն: Անոնց բոլոր խանութները մոտամբ կործաներ եւ մասամբ այրեր են:

Իրենց կրած ֆուսը 50,000 տուր է կըսուի: սակայն անձի կորուստ չէ եղած:

—Ռուսաց կառավարութիւնը՝ թիֆլիսի Ներսէսեան վարժարանի հոգաբարձութեան յանձնեց նոյն դպրոցի կալուածներէ տէրութեան պաշտօնէից ձեռք հաւաքուած գումարէն 35000 ռուբլի:

—Կաթողիկոսը իմաստալից նամակ մը ուղղելով Պարսից Շահին, մանրամասն կերպով բացատրած է կովկասեան արեւնահեղ դէպքերու պատճառները: Այդ նամակը անձամբ ներկայացուցեր է Շահին Թումանեան առեւտրական տան ներկայացուցիչը Պրն. Ալիքսան խան Թումանեան: Շահը խորին ուշադրութեամբ լսեր է նամակին ընթերցումը եւ հրամայեց է Արտ. Գործոց Նախարարին սիրալիր պատասխան մը գրել կաթողիկոսին:

—Սիպիրի Խարպին քաղաքին հայերը 2000 ռուբլի հաւաքեր են իրքուտսքի մէջ եկեղեցիի մը կառուցման համար:

—Փէրտինանտ իշխանին անուան տոնադարձին առթիւ Սիլիսդէէն Տ. Սարգիս քհն. Ղարիպեան հետեւալը հեռագրած է իշխանին. «Չերդ Արքայական բարձրու-

կոնձա՛մ ու խորշումա՛մ կերպարանքով, յաղթանդամ ու ճերմակ մօրուքով ծերունի մը, որուն ձեռքը հողէ ճրագ մը կար:

—Ա՛... դո՛ւն ես, մա՛րդ Աստուծոյ զօչեց Աւագ զարմացական ձեռով մը: Դիշեր ատեն ուսկի՞ց կուգաս:

—Թիմարայ կողմը գիւղ մը գացեր էի, անկից կը վերադառնամ նկատել տուաւ կարիպ Ախպէր: Վանքն ի՞նչ կայ, ի՞նչ չը կայ:

—Ի՞նչ պիտի ըլլայ... պատերուն նայիս՝ տեղը մնացած են... ուրիշ ի՞նչ կուգե՞ս...:

Աւագ Ախպէր միեւնոյն ատեն հաւաքանք մը հանեց սրտէն: Իր փոքրիկ խրճիթին մէջ հրաւիրեց զինքը եւ յարեց.

—Վանայրը տեսնելու եկար անանկ չէ՞:

—Այո՛, մրմնջեց կարիպ:

—Աստուածդ կը սիրե՛ս, յայտնէ՛ ինձի, այդ աղջիկը ուռնի՞ց բերած ես... ես կ'երգումս սա անմահ տաճարին առջեւը մէկու մը չըսել:

Թեան անուան Տօնադարձի առթիւ հաճեցէք ընդունել քաղաքիս ամբողջ հայ հասարակութեան շերմեռանդ եւ հիւս հնազանդութեան շնորհաւորութիւնները: Եւ ես կը մաղթեմ Ձերդ Արքայական բարձրութեան երկար ու երջանիկ կեանք, վասն փառաւորութեան Պուրկարիոյ:

Հոգեւոր Հովիւ Սիլիսդէէ
ՂԱՐԻՊԵԱՆ ՔԱՀԱՆԱՅ

ՊԱՏԱՍԽԱՆ

Նորին Արքայական բարձրութիւնը՝ ի պատասխանի վերի հեռագրին ամսոյս 19ին, իր դիւանատան վերատեսչի միջոցաւ հետեւեալ կերպով կը պատասխանէ.

«Ղարիպեան քահանայ հոգեւոր հովիւ հայոց Սիլիսդէէ:

«Նորին Արքայական բարձրութիւն, իշխանը շնորհակալ է թէ Ձեզ, եւ թէ քաղաքիդ ամբողջ հայութեան յայտնուած շնորհաւորութեանց համար:

ՆԱԶԱԼԻԿ ԳԱՆՑԵԼԻՐԻՍՅԻ
ՏՕՊՐՈՎԻՉ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Վառնա, 25 Մայիս 1906

Տ. Խմբագիր «Իրաւունք»ի.
Տօք. Մ. Նալպանտեանի Զուիցերիոյ Լօզան քաղաքին մէջ հաստատած գիւշերօթիկ վարժարանի մասին հետեւեալ նպաստաւոր տեղեկութիւնները արժան կը համարիմ քաղել փարիզու Հայոց Հոգեւոր Հովիւ Արժանապատիւ Տէր Վառնապուհ Աւագ քահանայ Քիպարեանի մէջ նամակէն եւ հաղորդել Ձեզ, որ եթէ կարելի է՝ հրատարակէք «Իրաւունք»ի առաջիկայ թուով:

«... Երկիցս այցելած եմք նոյն «Հայկազեան» կրթարանիս, ուր ամեն ինչ տեսած եմք ի կանոնաւորութեան, ուսմանց ծրագրին արդէն գոհացուցիչ եւ ուսանողաց տարուած խնամքն իսկապէս գնահատելի, քանզի է ընտանե-

—Ո՞ր աղջիկը... ընդհատեց կարիպ Ախպէր, որուն նայուտքը մթնեցաւ:

—Մի պահեր ինչ... մեր Վանահօր խուցը պզտիկ սիրուն աղջիկ մը կայ զոր գուն բերի գիշեր մը:

—Չըլլայ թէ՛ կը սխալիս:

—Ե՛ս:

—Այո՛ դո՛ւն:

—Ամենեւի՛ն: Որչա՛փ որ ծերացած եմ, սակայն անտառին մէջ ու վանքին պարիսպներուն շուրջը թռչունն անգամ աչքէս չը վրիպէր: Ես ձեր երկուքին քայլերը դիտեցի մինչեւ առաւօտ: Դեռ լոյսը չը ճեղքուած՝ այդ մանկատի աղջկան հետ ներս մտաք ու Վանահօր խուցը գացիք: Գուն այդ հագուստովդ էիք. իսկ աղջիկը թրքուհիներու յատուկ մետաքսայեռ չըլազ գետ մը հագած էր, ու գլուխը բացկարմիր քող մը փաթթուած էր:

(Շարունակելի)



կան եւ գործընկերաց, զոր կը վկայեն խղճի մտքը : Նաեւ կրթարանի վայրն մաքուր , օդասուն եւ բոլոր պիտոյքն անպակաս հոգացուած են :

«Աստի Հայ Ծնողք փոխանակ օտար ձեռքերու յանձնելու իրենց մատակարար կրթական հոգը, կարծէ որ վկայեալ եւ Արժանայարգ Դասատուին հաւատան այս գործը :»

Առանց բառ մը աւելցնելու Արժ. Տ. Հօր սոյն վկայութեան վրայ, հրաւէր կը կարգաւ իմ կողմէս՝ իրենց զաւակաց խնամեալ եւ միանգամայն զուտ ազգային դաստիարակութիւն մը տալ փափաքող ծնողաց օգտուիլ այս պապեհով թնկն :

ՄԱՐՏԻՐՈՍ ԲՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՈՒՐԱԽԱՆԻ ԼՈՒՐ ՄԸ

Հաստատ աղբիւրից իմանում ենք, որ Սասունի Մուրադը, որը շատերի կողմից սպանված կամ վաղուց մեռած էր համարվում, աշուղ է աֆրիկեան Տրիպոլիի աքսորավայրից փախչել և այժմ Պարիզ է գտնվում :

Մշակ

«ԻՐԱՆԻՆՔ» ի պատասխանները

... Ի ՍԻՆԻՍՏԵ.— Ձեր նամակը չէ կարելի հրատարակել, որովհետեւ շատ մը անակամեղէ գատ ուրիշ բան չպարունակեր :

Մ. Թ. ԱՅՏՕՍ.— Շատ կը ցաւինք ձեր յօդուածը չկրնալ տպելուս համար : պատճառը որ հոն առարկուած հարցի վրայ արդէն շատ ու շատ գրուած է լրագրաց մէջ :

Ար. Ճիզլիճեան ԲՕՆՍԹԱՆՑԱՆ.— Կը դարմանանք Փարիզի նորակազմ ընկերութեան մը համար ձեր ըրած աղայական քննադատութեանց վրայ : Կօշկակարն ցկոյնիս իւր :

Իսկ նամակի գինը որ չէք վճարած խորհրդէք մեզ 30 սանդիկ :

Տ. Վարդան Չալուշ, ԲՕՆՍԹԱՆՑԱՆ.— Ըստ ձեր կամոց սկսանք «Իրանին»-ը խրկել Ձեզ : հաճեցէք զրկել բաժնեգինը :

ՁԱՆԱԶԱՆ

Սպանիոյ ընկերական դասակարգութեանց մէջ՝ կան տեսակ մը մասնաւոր արտօնութիւններ վայելող բարձրաստիճան անձինք, որոնք Սպանիոյ Աւագանիք (Կլերան տէրաւոր) կը կոչուին, և ունին արտօնութիւն իրենց թագաւորին առաջը դրուելուն ծածկած ներկայանալու եւ նստելու :

Այս անգամ Ալֆօնս ԺԳ իւր ամուսնութեան առթիւ յիշեալ բարձրագոյն աստիճանը չնորհեց 14 ազնուականներու, որոնք յատկացեալ արարողութենէ յետոյ թագաւորին հրամանաւ գլուխներին գոց նստեցան իրեն գիմալը :

Այս նոր տիպաւորներէն մէկն է Վիկա Գուրը որ Քրիստափոր Բոլովպոսի սերունդէն է,

և ուրիշ մը, որ Մետինա Սիտօնիա անուանի ընտանիքի ժառանգորդն է :

— Պրաշովի (Հունգարիա) մէջ՝ միջազգային ժողով մը բացուեցաւ երկաթուղեաց այլ և այլ գծերու միջոցաւ ըլլալիք ուղղակի փոխադրութեանց սակագինները սորոշելու համար :

Այս ժողովոյ մասնակից են Աւստրո-Հունգարիոյ, Սերպիայի, Պուլկարիոյ, Ռումանիոյ և Թուրքիոյ կողմէ խրկուած ներկայացուցիչներ :

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Թէհրան, 5 յունիս
Շահը տկարութեանը պատճառաւ բաւական օրերէ ի վեր պալատէն գուրս չենէր :

Լոնտրո, 5 յունիս
Անգղիական մեծ նաւատորմի մը այս ամառ պիտի այցելէ Պալմիրի մէջ 4 Ռուս և 2 Գերման նաւահանգիստներ :

Վիեննա, 6 յունիս
Գերմանիոյ Վիլհէլմ կայսրը այս առաւօտ ժամ 8 ը 44 անցած մասնաւոր կառախումբով հասաւ Հիւսիսային կայարանը, ուր ընդունուեցաւ Թրանց Եօզէֆ կայսրէն :

Երկու Վեհապետաց տեսակցութիւնը խիստ մտեմական էր : երկուքն ալ իրարու ձեռքերը սեղմեցին և երեք անգամ զիրար դրկեցին : Յետոյ անմիջապէս Շէնպրոքսի պալատը գացին միասին :

Պարչէլօնա, 4 յունիս
Տեղւոյս «Էթլ Մօտերն» վարժարանի Վերադասուին և դասատուներէն մի քանիսը ոստիկանութիւնը ձերբակալեց իրենց անարդիւն ըլլալուն պատճառաւ :

Կրսուի Թէ Ալֆօնս Թագաւորին դէմ ռումբ նետող Մօրալէս ևս յիշեալ վարժարանի դասատուներէն էր :

Բեթերսպուրկ, 3 յունիս
Արդարութեան նախարարին առաջարկութեան վրայ, նախարարաց ժողովը մահուան պատժոյ բարձման համար նպաստաւոր միտք յայտնեց :

Ռոմա, 2 յունիս
«Ափանս Սթեֆանի» կիմանէ որ Անգոնայի մէջ ոստիկանութիւնը կապակիւնէլի Անթոնուս անուն սափրիչի մը խանութը խուզարկելով՝ երեք լեցուած ռումբ գտեր է պատրոյգն ալ պատրաստ :

Աս ռումբերուն երեւան ելնելովը 12 անարշիտներ ձերբալուած են :

Ապացոյցներով հաստատուեցաւ, որ ամսոյս 24 ին իտալիոյ թագաւորը Անգոնա այցելած ատենը, անարշիտները անոր դէմ դաւադրութիւն մը պիտի գործեն եղէր :

ՀՍԿԱՅ ԽԱՐԵՐԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Պօլսոյ ոստիկանութիւնը ձերբակալեց Նէսիմ Ալշէհ անուն հրեայ մը որ վիտինի մէջ վաճառական ըլլալով, պանքաներէն 80,000 ֆրանք, և Վառնայի, Ռուս-ճուգի և Վիտինի վաճառականներէն ալ 45,000 ֆրանք, այսինքն ընդամէնը 125,000 ֆր. շորթած և փոխած էր Պօլիս, և Բերա, Շիշանէի պահականոցին մօտակայ տուն մը հաստատուած : Ֆրասուած վաճառականներուն և պանքաներուն կողմէ պաշտօնեայ մը եկաւ Պոլիս, որ հանդիպեցաւ խաբէրային և ձերբակալել տուաւ : Նէսիմ խոստովանեցաւ իր խաբէրայութիւնը, բայց ըսաւ թէ առեւտր գործերուն ձախորդութեան հետեւանքով մղուած էր այդ բանին : Իր պատիւը վերահաստատելու համար նամակ գրած է եղբր հօրը որ վճարէ պարտքերը, հիմայ այդ պատասխանին կսպասէ որ, եթէ աննը պատտաւ ըլլալ, պիտի դառնայ Վիտին և պիտի աշխատի գործը պատուաւորապէս կարգադրել : Խնդիրը յանձնուեցաւ դատարանին :

Ի Խ Թ Ա Ր

Գրսա պիւր Եօլճըլըլը միւնասիպէթլէ ԻՐԱՆԻՆՔ ընթերցէ գրութիւն 2—3 նոմէրօ

տահա էրմէնիճէ նէշր օլընաճագ տըր :

Տօպրիչ բանաիրի միւնասիպէթլէ ճիվար գաղալարտան բանաիրէ կիտէն ապօնէլէրիմիլին կաղէթտմըզա օլան պօրճլարընը Տօպրիչտէ ֆօթօկրաֆ միւսիւն, Սիսակեանա էտա իթմէլէրինի բէճա իտէրիզ :


Միւսիր Մուհարրիր
Յ. ԳՈՒՐՊԵԹԵԱՆ

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, 27 Մայիս
ՉԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ		
Վակօն	54-60 լիպ.	9.30/10.40
Արապա	52-62 լիպ.	9. /11.20
ԱՐԲԱ,		
Վակօն 100 քիւ		12. —/12.60
Արապա	42-47 լիպ.	7.80/8.
ԵՈՒԼԱՖ արապա	33/36 լիպ.	4.40/5.
» 100 քիւ		10.20 /10.40
ՉԱՎՏԱՐ արապա	եօգ	
» 100 քիւ		1.250/13.
Կիւնտէ	2—3 վակօն	վէ 8—10
արապա կէլմէքտէ	վակօն մուամէլէսի նարօլէօն	20 ֆր. արապա մուամէլէսի նարօլէօն
		20. 20
ՊԱԳԱԼԻՑԷ		
Վարնա	բիացարնտա	պագգալիլէ մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթուն ֆրանք իլէ :
ԳԱՀՎԷ		2.10/ 2.25
Շէֆէր նէմցէ		.81
Շէֆէր քէսմէլ	սանտրգ	41.
Բիրինճ ճէնօվա չուվալը		42.
» Ֆիլիպէ	»	36.—36/35
» Ինկիլիզ	»	29. 50
Բիգօն	»	49.
ԿԱՁ Սանտրըր		10. 40
Չէթին Կաղը քիւ		90—1.
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ		25—25/35
Եուսուրթա	100 առէթի	4. 60

Одговорникъ А. Курбетиянъ
вѣд. пикетъ а Д. Тодоровъ и С.но—Вориз



OMEGA

ԲԱՄԱՑԱՅ ՕՄԵԳԱ

ՅԱԿՈՐ ԹՕՍՊԸԸԳԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՎԱՌՆԱ

Բարիգոյ, Ժընէվի եւ Պոռլընի ցուցահանդէսներուն մէջ մեծագոյն պարզեւնեք ստացող ու համաշխարային գնահատման բարձրագոյնին արժանացող այս ժամացոյցի գործարանը «ՕՄԵԳԱ» իրօք իր անունը արդարացուցած է իբր ճարտարարուեստը կատարելագործութեանց վերջին աստիճանին ՕՄԵԳԱ ին հասցնող հաստատութիւն մը :

Այս հոգակաւոր Գործարանին ներկայացուցիչն է Տ. Թակըր Թօսպըլըգեանի վաղ ճառատունը, ուր կը գտնուին «ՕՄԵԳԱ» ժամացոյցներու բոլոր տեսակները, ոսկեայ, արծաթեայ եւ պողպատեայ ամեն չափէ ու մեծութենէ. ԳիւնըրԸ ՉՈՓԱԻՈՐ :

Կրգանի ինչուեւ Պուլկարիոյ բոլոր կարեւոր ակնավորումներն և ժամացոյցներն իր քով :